ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ԵՎ ՆԱԽԱՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ն. Բ. ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

Շահական Պարսկաստանի բռնատիրությունից Արևելյան Հայաստանի ազատագրումը և միացումը Ռուսաստանին շրջադարձային նշանակություն ունեցող իրադարձություն էր հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ։ Նրա արևելյան հատվածի սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացման համար ստեղծվեցին համեմատաբար նպաստավոր պայմաններ. վերաբնակեցվեց Արարատյան աշխարհը, ֆիզիկական ոչնչացման և տարրալուծման մշտական վտանգի վերացման շնորհիվ խաղաղվեց արևելահայերի ազգային կյանքը։ Ջնայած ցարիզմի գաղութային քաղաքականության հարուցած բազմապիսի խոչընդոտներին ու արգելակներին, հայ ժողովրդի արևելահայ հատվածը աստիճանաբար դուրս էր գալիս խանական շրջանի դարավոր հետամնացության ու անշարժության վիճակից և կատարում իր կուլտուրական առաջընթացի նշանակալից քայլերը։ Նրա բախտը անքակտելիորեն միահյուսվում էր այն պայքարին, որ իր մեծ գալիքը նախապատրաստող ռուս ժողովուրդը մղում էր ընդդեմ ինքնակալության։

Ռուսական տիրապետության ներքո հայ ժողովրդի կյանքում կատարվող սոցիալ-տնտեսական և մշակութային տեղաշարժերին և ընդհանրապես Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու պատմական ակտին անդրադարձան ոչ միայն ժամանակակիցները (Խ. Աբովյան, Մ. Թաղիադյան, Հ. Ալամդարյան, Գ. Խուբով և ուրիշներ), այլև հետագա հայ հասարակական-քաղաքական մտքի և պատմագրության բազմաթիվ ներկայացուցիչներ։

XIX դարի հայ հեղինակներից այդ խնդիրը ամենից շատ արծարծել է Ալեքսանդր Երիցյանը (1841—1902 թթ.)։ Իր հասարակական գործունեությունը Ալ. Երիցյանը սկսել է անցյալ դարի 60-ական թթ.։ Մի ժամանակաշրջան էր դա, երբ ձևավորվում էին հայ հասարակական-քաղաքական հոսանքները։ Իր քաղաքական հայացքներով նա գերազանցապես տատանվում էր ազգային-պահպանողական և լիբերալ-բուրժուական հոսանքների միջև։ Ռուսական տիրապետության գնահատման հարցում Երիցյանը դրսևորում էր որոշակի անհետևողականություն։ Նա մերթ դժգոհում էր ռուսական տիրապետության նորամուտ բարքերից, մերթ գոհունակություն հայտնում Անդրկովկասի տնտեսական ու քաղաքական նվաճման հետևանքով հայերի համար ստեղծված անձի ու գույքի ապահով վիճակի առիթով[1]։

1860-ական թթ., հարելով ազգային-պահպանողականներին, Ալ. Երիցյանը քննադատում էր ցարիզմի անդրկովկասյան քաղաքականությունը, նշում

---

[1] *Տե՛ս* Ա. Հ. Հովհաննիսյան, *Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք II, Երևան, 1956, էջ 51—52։*

անբարենպաստ այն դրությունը, որի մեջ գտնվում էր հայ առևտրական կապիտալը։ Իբրև առևտրական բուրժուազիայի շահերի պաշտպան, նա երկյուղ ուներ արդյունաբերական կապիտալիզմի զարգացման հետևանքներից, որն ըստ նրա «վատ» ներգործություն էր ունենում Անդրկովկասում հայ առևտրական կապիտալի «կանոնավոր» զարգացման ընթացքի վրա։

Ալ. Երիցյանը, ինչպես նաև 1860-ական թթ. ազգային-պահպանողականների մեծ մասը (Մ. Աղաբեկյան, Կ. Շահնազարյանց, Գ. Ախվերդյան, Պ. Շանշյան և այլն), չէր ըմբռնում, որ ցարական ինքնակալության քաղաքական շահերը զգալիորեն միահյուսվում էին Անդրկովկասի զարգացման հեռանկարներին, անտես էր առնում նաև այն հանգամանքը, որ, ի տարբերություն ֆրանսիական և անգլիական գաղութների, Անդրկովկասում, ինչքան զարգանում էին բուրժուական արտադրահարաբերությունները, այնքան երկրամասն ավելի էր առաջադիմում տնտեսապես։

1870-ական թթ. վերջերից Ալ. Երիցյանը, որոշ չափով երես դարձնելով ազգային-պահպանողականներից, նշմարելի շրջադարձ կատարեց դեպի լիբերալիզմը։ «Ստեփանոս Նազարյանց և նորա գրական գործունեությունը» ծավալուն իր հոդվածում, բաղդատելով 50-ական թթ. Թուրքիան Ռուսաստանի հետ՝ վերջինիս մասին նա գրում էր. «Այս տերության մեջ ժողովուրդը արդեն հրավիրված էր մասամբ հասարակական կյանքի մեջ մասնակցելու. ստեղծելով մի նոր լուսավորություն, սկիզբն առավ մի նոր գրականություն, պատրաստվում էին ստրուկների ազատությունը, դատարանական հեղափոխությունը, գյուղավարչական կանոնադրությունը և շատ ուրիշ բարենորոգումներ, որոնց համակրում և մասնակցում էր ժողովուրդը, ամեն տեղ շարժում ու կյանք էր սկսում։

Բնականաբար, Ռուսաստանի հայերիս վերաբերմամբ առանց ազդեցության չէր կարող անցնել այդ բոլորը, ինչպես և չանցավ»[2]։

Սակայն Ալ. Երիցյանն ընկավ մի այլ ծայրահեղության մեջ։ Ճիշտ գնահատելով Արևելյան Հայաստանի ազատագրման գործում Ռուսաստանի առաջադիմական դերը, ինչպես և Անդրկովկասի ու Պարսկաստանի նկատմամբ Անգլիայի ու Ֆրանսիայի նվաճողական ձգտումները[3], նա սկսեց ներբողել ցարիզմի քաղաքական նպատակամղումները։ «Անցյալ դարու ընթացքում,— գրում է նա,— գաղթականության շնորհիվ, այնքան բազմացավ Ռուսիո հայ հպատակների թիվը, որ հյուսիսային գահակալները յուրյանց սրտին մոտ համարեցին հայոց բարոյական-կենսական շահերը ու 1800 թվականից սկսած կտրուկ կերպով միջամուխ եղան հեռու-հեռու պարսկական սահմաններում գտնվող էջմիածնական Աթոռի Հայրապետների ընտրության գործում»[4]։ Պատմական իսկությունը այս տողերում, իհարկե, աղավաղված էր. հայ եկեղեցու գործերին ռուս ցարերի «միջամուխ» լինելը բնավ չէր բխում «հայոց բարոյական-կենսական շահերից», ինչպես հակված էր կարծելու Ալ. Երիցյանը, այլ դեպի Անդրկովկաս առաջանալու նրա ռազմա-քաղաքական ձգտումներից։

---

2 Ալ. Երիցյան, Ստեփանոս Նազարյանց և նորա գրական գործունեությունը, «Փորձ», 1879, № 9, էջ 61։

3 «Փորձ», 1881, № 3, էջ 59։

4 Ալ. Երիցյան, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, մասն Ա, Թիֆլիս, 1894, էջ 103։

Ցարիզմի գաղութային քաղաքականությունը սքողելու մտայնությունը հատուկ էր ոչ միայն Երիցյանին։ Կարապետ Եղյանը ևս եռանդուն կերպով ընդգծում էր «այն առավելություններն ու օգուտները, որոնք բխում էին քրիստոնյա ժողովուրդներին Ռուսաստանին միակցող բարոյական կապերից»[5]։ Իբրև բարձրաստիճան ցարական պաշտոնյա, ազգային-պահպանողական Եղյանը անտեսում էր ըացարձակ այն ճշմարտությունը, որ ցարական իշխանություններին մտահոգողը ոչ թե վրացիների կամ հայերի ճակատագիրն էր, այլ Ռուսաստանի ազնվականության և նորելուկ բուրժուազիայի շահերը։ «Որպես ցարական պաշտոնյա,— գրում է ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը,— Եղյանը ցարիզմի հայկական քաղաքականության ուշիմ և բանիմաց ձայնատարներից մեկն էր և միաժամանակ ազգային-պահպանողական ուղղության ռուսահայ ռանտյեների և առևտրա-արդյունաբերական մագնատների քաղաքական կոնսուլտանտն ու «ազգի ու եկեղեցու» կիսապաշտպան ախոյանը Ռուսաստանում։ Երկու տերանց ծառայելու մտայնությամբ Եղյանը հարկադրված էր շարունակ տարուբերվել ռուս մեծապետական Սքիլլայի և հայ լուսավորչական Քարիբդայի միջև»[6]։

Լինելով հայ լուսավորչական եկեղեցու ջերմ պաշտպան, Երիցյանը Եղյանի նման կարծում էր, թե կրոնը «միակ փրկարար միջոցն է մեր պատմության անցյալի անջատված օղակը ձեռք բերելու համար»[7]։ Իսկ դա պատահական չէ։ Ե՛վ Կ. Եղյանը, և՛ Ալ. Երիցյանը պատմահայեցությամբ և հասարակական կյանքի երևույթների ընկալմամբ իդեալիստներ էին, հանգամանք, որ սակայն չխանգարեց նրանց, որպեսզի պատմական որոշ իրողություններ բացատրեն բուրժուական ռեալիզմի դիրքերից։ Այսպես, 1880—1890-ական թթ. գրած իր աշխատություններում Ալ. Երիցյանը շատ մեծ կարևորություն էր տալիս Արևելյան Հայաստանի միացմանը Ռուսաստանին։ «Ներկա դարուս մեջ,— գրում էր նա 1828 թ. փետրվարի 10-ի Թուրքմենչայի պայմանագրի մասին,— ոչ մի քաղաքական անցք այնքան նշանավոր չէ եղած հայ ազգի համար, որքան պարսկական խղճուկ գյուղի մեջ կայացած հիշյալ պայմանագիրը։ Սրա զորությամբ Հայաստանի սիրտը — Արարատյան աշխարհը՝ յուր նվիրական մայր աթոռով հանդերձ, ընդմիշտ դուրս է գալիս պարսկական լծից և մտնում քրիստոնյա տերության հզոր պաշպանության ներքո։ Տիրելով այդ սիրտը, Ռուսիան հյուրասիրությամբ բաց էր անում իր դռները այն հայերի համար, որոնք այլևս չդիմանալով դարավոր նեղությանց, հեշտությամբ հրաժեշտ էին տալիս յուրյանց ծննդյան վայրերին և հանուն ազատության գաղթում, համախմբվում էին այս նոր ավետյաց երկրում, մոտ իրենց քաղցր Մասիսին և Արագածին, յուրյանց սուրբ էջմիածնին»[8]։

1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմը Արարատյան երկրում տեղի ունեցած բազում ասպատակություններից ու զինաբախումներից տարբերվում էր նրանով, դրում էր Երիցյանը, որ նա հայոց ազգային պատերազմն էր «ընդդեմ պարսից դարավոր բռնատիրության»[9]։

---

5 Г. Эзов, Сношения Петра Великого с армянским народом, СПб., 1898, էջ 11։

6 Աշ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք II, Երևան, 1956, էջ 9։

7 «Փորձ», 1881, № 5—6, էջ 249։

8 Ալ. Երիցյան, Ամենայն հայոց կաթողիկոսությունը..., մասն Ա, էջ 103։

9 Նույն տեղում։

Թեև գործունեության վերջին շրջանում Ալ. Երիցյանը քաղաքական կողմնորոշմամբ լիովին դիմաշրջվել էր դեպի Ռուսաստան, սակայն Անդրկովկասի և Հայաստանի սոցիալ-քաղաքական զարգացման հետևանքով առաջ եկած տեղաշարժերի արժեքավորման հարցում չկարողացավ զատվել անցյալի պահպանողական հայացքներից։ «Չորս տարվա պատերազմը[10] որքան որ յուր օգուտները ունեցավ, այնքան էլ հեղափոխեց ժողովրդի նահապետական համեստ կյանքը և կեղծ լուսավորություն մտցրեց մանավանդ անպատրաստ ռամիկ հայ հասարակության մեջ»[11]։ Պատմաբանը չկարողացավ տեսնել, որ այդ «կեղծ» լուսավորությունը նոր դարաշրջան էր բացում հայ ժողովրդի կյանքում։ Տրտնջալով նորամուտ բարքերից, Երիցյանը ընդհանրապես դժգոհ չէր ցարական տիրապետությունից, որովհետև պարսկա-թուրքական զնդանից ազատագրված ժողովուրդը և նրա պատմագրողը «միայն քնքուշ և բարեկամական զգացմունքներ» կարող էր տածել նորեկ իշխանության նկատմամբ։ Ծանր հարստահարություններից հյուծված հայ ժողովուրդը, ասում էր Երիցյանը, սեփական փորձով գիտեր նախկին տիրողներին և տեսնում էր ռուսական պետության առավելությունները, ուստի պաշտպանում էր վերջինիս քաղաքականությունը՝ զերծ մնալու համար այն դժոխքն ընկնելու վտանգից, որից հազիվ դուրս էր եկել բազում զոհողությունների գնով։

Այն պատմաշրջանը, որի ուսումնասիրմանը Ալ. Երիցյանը նվիրեց շուրջ կես դար, ըստ էության շատ ավելի խորն ու հակասական էր, քան ներկայացավ նրա ուսումնասիրություններում։ Ալ. Երիցյանը ավելի շատ նյութեր պատրաստեց պատմության համար, քան կատարեց դրանց գիտական շարադրանքը։ Նրա աշխատություններում հայ հասարակական-քաղաքական կյանքի բոլոր տեղաշարժերը կապվում էին բարձրաստիճան եկեղեցականների, ռուս ցարերի ու նրա գեներալների գործունեության հետ։ Ուշագրավն այն է, սակայն, որ պատմության ու հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները իդեալիստորեն ընկալելով հանդերձ (իսկ այդպիսի ընկալումը հատուկ էր նրա ժամանակակիցներից շատերին), Ալ. Երիցյանը կարողացավ ճիշտ գնահատել պարսկական լծից Արևելյան Հայաստանի ազատագրման պատմական նշանակությունը։

Պատմական այդ մեծ իրողությանը անդրադարձել են նաև Ա. Պերպերյանը, Ստ. Պալասանյանը, Բաֆֆին և XIX դարի երկրորդ կեսի հայ հասարակական-քաղաքական մտքի ուրիշ ներկայացուցիչներ։ Հայ պատմագրության և հասարակական մտքի բոլոր այն ներկայացուցիչները, որոնք Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին ընդունում էին իբրև առաջադիմություն և ընդհանրապես Ռուսաստանի հետ էին կապում հայ ժողովրդի բախտը՝ ոչ միայն ելնում էին նրա հարևան մահմեդական երկրներում տիրող կացությունից, այլև հաշվի էին առնում հայերի բազմադարյան տառապանքի դասերը։ Ընկնելով ռուսական տիրապետության ներքո, գրում էր Ա. Պերպերյանը, արևելահայերը «...զերծան յայնչափ բազմաղետ հարստահարութեանց բռնաւորացն պարսից, որ գրեթե անպակաս իւրաքանչիւրս ամի չնչին առիթ ինչ գտեալ, նեղէին և չարչարէին զբնակիչ հայ ազգիս գիւղօրէից և զանօրէից՝ ծանր ու ծանր հարկապահանջութեամբ և տուգանօք, և վնասուք, կեղեքէին, կողոպտէին

10 Երիցյանը նկատի ունի 1826—1828 և 1828—1829 թթ. պատերազմները։

11 Ալ. Երիցյան, Ամենայն հայոց կաթողիկոսությունը..., մասն Ա, էջ 447։

և մերկացուցանէին զբնակիչս, և բազում անգամ հրձիգ առնէին և աւերէին զտունս և զստացուածս նոցին զամենայն»[12]։

«...Հայերը,— գրում էր Ստ. Նազարյանցը,— ճշմարտապես և իրավացի՛ շնորհակալ են Ռուսաստանին, որ ազատել է նրանց մի անտանելի, անարգական ստրկությունից և բացել է նոցա առջև մի նոր քաղաքական կյանքի ասպարեզ»[13]։ Պարսկական բռնակալությունը Նազարյանցի համար խավարի ու հետամնացության մարմնացում էր՝ «ասիական անշարժության» և բարբարոսության իսկական դրսևորում։ Պարսկա-թուրքական գազանաբարո լծից ազատագրվելը և Ռուսաստանի տիրապետության ներքո հայերի տնտեսական ու քաղաքական կյանքի նորմալացումը պայմաններ ստեղծեցին նրանց մտավոր զարգացման համար։ «Հայոց ժողովուրդը յուր այժմյան վիճակի մեջ Ռուսաստանում, անտարակույս, գտնվում է հոգեղեն շարժողության մեջ,— գրում էր Նազարյանցը,— և փոքր ի շատե հառաջադեմ է ժամանակի ընթացքի հետ։ Նա կյանքի մեջ շատ բան տեսնում է, շատ բան ուսանում է կյանքից ու դպրոցից, իբրև անդամ քաղաքական ընկերության, որո մեջ կա օրենք, իրավունք, դատ ու դատաստան, անձնական ազատություն և պաշտպանություն սեփականության, մի խոսքով քաղաքավարական կարգ ու կառավարություն։ Հայոց այժմյան վիճակը Ռուսաստանի մեջ ցուցանում է անհամեմատ առավել թե՛ նյութական և թե՛ մտավոր բարօրության պայմաններ, քան թե որևիցե հառաջընթաց օրերում ասիական անարգ, բռնակալ, ամենայն հառաջադիմություն ճնշող, ամենայն ազատ շարժողություն կաշկանդող կառավարության ներքո։ Ռուսաստանը յուր քաղաքական կարգերի հետ միասին տարածում է ամենայն տեղ լուսավորություն, կրթություն և գիտություն, որ չափով և որ կերպով ինքը այժմ կարողացած է այդ բարիքը սեփականել յուրյան փոխ առնելով Արևմտյան Եվրոպայի՛ առատաբուխ և ճոխ աղբյուրներից»[14]։

Պարսկական տիրապետությունից Արևելյան Հայաստանի ազատագրման և Ռուսաստանի տիրապետության տակ անցնելու պատմական առաջադեմ իրողությունը նշում էր նաև Գր. Արծրունին։

«Արդարև, մենք, Կովկասի բնակիչներս, ինչ դրության մեջ էինք ռուս տերությունից առաջ։ Ռուսական տերությունը մեզ համար գիմնազիաներ շինեց, մեզ ճանապարհներ տվեց գիմնազիաներ մտնելու։ Մեր երկրի արդյունքները ճանապարհների պակասության պատճառով մեր երկրից չէին դուրս գալիս։ Ռուսիայի տերությունը մեզ ճանապարհներ շինեց. այժմ երկաթուղիներ կշինե։ Արվեստը, վաճառականությունը, երկրագործությունը ինչ դրության մեջ էին։ Վրաստանում նոքա ապահովացրած չէին չերքեզների կողմից, իսկ Հայաստանի կողմերում մահմեդականությունը յուր անշարժությամբ արգելք էր դնում ամեն աշխատանքի տարածմանը։ Ռուսիայի տերությանն ենք պարտական, որ այժմ մեր երկրում աշխատանքը ապահովացրած է և կարող է առաջ գնալ»[15]։ Եթե չլիներ ռուսական տիրապետության ազդեցությունը, շարունակում էր նա, մենք միևնույն տեղում կմնայինք, ինչպես

12 Ա. Պերպերյան, Պատմութիւն հայոց, Կ. Պոլիս, 1871, էջ 170։

13 Ստ. Նազարյանց, Երկեր, հատ. Ա, Թիֆլիս. 1913, էջ 95—96։

14 «Հանդես գրականական և պատմական», գիրք I, Մոսկվա, 1888, էջ 234։

15 «Գր. Արծրունու աշխատությունները», հատ. I, Թիֆլիս, 1904, էջ 86—87։

մնացինք հինգ-վեց դար, «մինչև որ բախտավորապես հանեց մեզ մեր խոր քնից, մեր անշարժությունից, ռուսական տերության ազդեցությունը»[16]։

Արևելահայերի կյանքում ռուսական տիրապետության նշանակությունը այս նույն դիրքերից էր արժեքավորում պատմաբան-սոցիոլոգ և գրականության տեսաբան Ստ. Պալասանյանը։ Ազգի փրկությունը նա տեսնում էր լուսավորության և արվեստների զարգացման, ժողովրդի տնտեսական ու կուլտուրական դրության բարելավման, Անդրկովկասում և Հայաստանում կապիտալիստական արտադրահարաբերությունների բուռն աճի անհրաժեշտության մեջ։

1890 թ. Թիֆլիսում լույս տեսավ Ստ. Պալասանյանի «Պատմություն Հայոց» աշխատությունը, որը կարճ ժամանակաշրջանում ունեցավ երկու վերահրատարակություն (1895 և 1902 թթ.)։ Ժամանակին շատ մեծ համարում ստացած իր այս գրքում Պալասանյանը բուրժուական օբյեկտիվիզմի դիրքերից բնութագրեց հայերի նկատմամբ Ռուսաստանի քաղաքականության ողջ նախընթացը։ «Աչքի առաջ ունենալով յուր երկրի վաճառականության և արհեստների բարգավաճումը և յուր ապագա աշխարհակալությունները Ասիայում,— գրում էր Պալասանյանը,— ռուս պետությունը... պաշտպան ու բարեկամ հանդիսացավ հայոց։ Ռուսաց թագավորները մեծամեծ խոստումներ տվին հայոց, արտոնություններ շնորհեցին, աստիճաններ ու պատվանշաններ բաշխեցին, որպեսզի նոցա համակրությունը գրավեն»[17]։ Եթե Ռուսաստանը չէր կարող վերականգնել Հայաստանի առաջվա փառքը, ապա պարսկահայերի ու արևմտահայերի զանգվածային հայրենադարձության շնորհիվ նա պայմաններ ստեղծեց կրկին նորոգելու Հայաստանը։ «Պարսկական և տաճկական պատերազմների արդյունքը այն եղավ,— շարունակում է Պալասանյանը,— որ Ռուսաստանը յուր սահմանների ընդարձակության հետ մեկտեղ մի խաղաղ և աշխատասեր ժողովուրդ ձեռք բերեց, որ յուր խիտ ազգաբնակությամբը տերության արևելյան սահմանները ապագա ասպատակություններից պիտի ապահովեր և երկրի առևտուրն ու արհեստները պիտի ծաղկեցներ։ Եվ հիրավի, հայերը իրենց նոր կացության մեջ կյանքի և ստացվածքի ապահովություն վայելելով, սկսան մեծ եռանդով վաճառականության ետևե լինել, որով Կովկասի առևտուրը կարճ միջոցում մեծ պայծառության հասավ։ Նվիրական ապահովությունը հայոց միջոց տվեց կրթության հոգ տանելու և այս կողմից ռուսահայք ավելի առաջադիմություն արին, քան Թուրքիայի հայերը՝ իրենց կանոնավոր ուսումնարաններով»[18]։ Պալասանյանը մեծ կարևորություն էր տալիս ռուսական տիրապետության շնորհիվ արևելահայերի տնտեսական ու մշակութային կյանքում առաջացած տեղաշարժերին, հայ ժողովրդի ազգային համախմբման գործին։

Իր գործունեության առաջին շրջանում Ռաֆֆին ճիշտ չէր համարում XIX դարի 20-ական թթ. հայ որոշ գործիչների այն ձեռնարկը, որի հետևանքով «պարսկահայոց մեծ մասը գաղթեցին դեպի Արաքսի մյուս կողմը, անմխիթար սուգի մեջ թողնելով յուրյանց հայրենակիցքը»[19]։ Բայց մեծ գրողը հն-

16 Նույն տեղում, էջ 26։

17 Ս տ. Պ ա լ ա ս ա ն յ ա ն, Պատմություն Հայոց, Թիֆլիս, 1902, էջ 482—483։

18 Նույն տեղում, էջ 499—500։

19 Ռ ա ֆ ֆ ի, Երկերի ժողովածու, հատ. I, Երևան, 1955, էջ 55։

տաղայում վերանայեց 1850-ական թթ. իր հայացքները։ 1870-ական թթ. իր բալմաթիվ ստեղծագործություններում Րաֆֆին գտնում էր, որ հայերի ազգային-քաղաքական ազատությունը մահմեդական երկրներում խաթարված է, իսկ ազգային-մշակութայինը՝ ժամանակավոր է։ «Հայը, եթե վայելում է ազատություն յուր ազգային հիմնարկությունների մեջ,— գրում էր վիպասանը 1873 թ.,— դրանով նա պարտական է տիրող ազգերի դեռ մանուկ քաղաքական զարգացմանը։ Իսկ այդ ազատությունը ժամանակավոր է»[20]։ Րաֆֆին հավատով չէր լցված դեպի պարսկահայերի ու թուրքահայերի գալիքը. «Պարսկաստանի հայոց ապագան,— գրում էր նա,— չէ խոստանում որևիցե մխիթարական վախճան, քանի նրա գոյությունը ապահովող մի հաստատ դրություն չենք տեսնում... Հայը Պարսկաստանում ոչինչ բանի տեր չէ. նրա կյանքը, նրա ընտանիքը իրեն չեն պատկանում»[21]։ Դժոխային այդ վիճակից ազատվելու համար պարսկահայը մի ելք ուներ միայն՝ «թողնել Պարսկաստանը և գաղթել դեպի ռուսաց հողը»[22]։ Րաֆֆին միաժամանակ դիմակայում էր «Տաճկաստանի բարբարոսությունները ծածկող և նրա երևակայական առաջադիմությունը հռչակող անձնական հաշիվներով կուրացած» բոլոր այն հրապարակագրողներին, ովքեր հավատացնում էին, թե քրիստոնյա հպատակները այստեղ «համարյա կատարյալ ազատություն են վայելում»[23]։ Ընդհակառակը, Րաֆֆին գտնում էր, որ ռուսահայերի տնտեսական և հասարակական կյանքի զարգացումը բոլոր կողմերով բարձր էր Թուրքիայի հասարակական կյանքի զարգացումից։

«Սալբիի» առաջաբանում ռուսական զենքի հաղթական երթին նպաստող հայ գործիչների ձեռնարկները քննադատող հեղինակը «Հարեմում» գրում էր, որ չնայած Անդրկովկասում ցարիզմի վարած գաղութային քաղաքականությանը, Ռուսաստանը, այնուամենայնիվ, դրական դեր էր կատարում վրացիների և հայերի նկատմամբ, որովհետև ռուսները «գերի չեն առնում և պարսիկների նման չեն թալանում»[24]։ 1870-ական թթ. Պարսկաստանի ծանր վիճակը Րաֆֆին նույնացնում էր «առաջ քան ռուսաց տիրապետությունը» կովկասյան նահանգներում նույն խաների կողմից տանջվող հայության կացության հետ։ Դրա համար էլ եթե «Ո՞ւր է իմ հայրենիքը» բանաստեղծության լիրիկական հերոսը չէր կամենում ապրել ո՛չ Պարսկաստանում և ո՛չ էլ Թուրքիայում[25], ապա «մեր ժամանակներից 20—30 տարի առաջ և կարելի է ասել այն օրից, երբ ռուսները տիրապետեցին Կովկասը, հայ երիտասարդության առջև բացվեցավ մի ընդարձակ ասպարեզ»[26]։

1880-ական թթ., երբ ակներև դարձավ ցարիզմի բացասական դիրքավորումը դեպի արևմտահայերի ազատագրական շարժումը և Արևելյան Հայաստանում ուժեղացավ նրա հալածական քաղաքականությունը հայկական դպրոցների նկատմամբ, Րաֆֆին կրկին ընկավ քննադատական խորհրդածությունների մեջ։ Այս անգամ Ղարաբաղի հայկական մելիքությունների վե-

20 Ր ա ֆ ֆ ի, Երկերի ժողովածու, հատ. IX, Երևան, 1964, էջ 132։
21 Նույն տեղում, էջ 210։
22 Նույն տեղում, էջ 213։
23 Նույն տեղում, էջ 46։
24 Նույն տեղում, հատ. 1, էջ 465։
25 Ր ա ֆ ֆ ի, Ուր է իմ հայրենիքը, տե՛ս «Փունջ», հատ. I, Թիֆլիս, 1874, էջ 187։
26 Ր ա ֆ ֆ ի, Գրականության մասին, Երևան, 1958, էջ 221։

բացումն էր ցավ պատճառում հայրենասեր գրողին. Բաֆֆին դժգոհ էր այն բանից, որ չիրականացան Ղարաբաղի մելիքների ազգային-քաղաքական ակնկալությունները։ Այնուամենայնիվ, նա գոհ էր, որ ռուսական տիրապետությունը ընդմիշտ վերացրեց հայերի ֆիզիկական ոչնչացման՝ դարերից եկող մշտական երկյուղը և տնտեսական ու մշակութային նշանակալից վերելք ապահովեց նրանց համար։ Եվ սա բնորոշ էր ոչ միայն Բաֆֆուն։

Արժեքավորելով Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու իրողությունը և արտահայտելով իր վերաբերմունքը դեպի Ռուսաստանը և պարսկահայերի ներգաղթը, հայ պահպանողականության ինքնատիպ ներկայացուցիչ Մաղաքիա Օրմանյանը (1841—1918 թթ.) գրում էր. «Հայերը ավելի շատ հարստահարություններեն կփախչեին, և սպագա բարօրություն կփրնտրեին և այդ մասին հուսախաբ չեն եղած, քանզի պաշտոնական վիճակագրությունները էլ, միայն Երևանի և Նախիջևանի մեջ 60 տարիների ընթացքին եռապատիկ անցած կցուցանեն տեղի հայաբնակությունը»[27]։ Օրմանյանը ռեալիստորեն էր գնահատում պատմա-քաղաքական անցումները ու կանդառները։ Քիչ չեն պատահել, գրում էր նա, երբ ցարական տիրապետության ներքո սաստկացել են հայության նկատմամբ ճնշումները ու հալածանքները, փակվել մշակութային հաստատությունները ու դպրոցները, բռնագրավվել եկեղեցական գույքը, բայց, այնուհանդերձ, հեղինակը գոհ էր ռուսական տիրապետությունից, որովհետև նա «համատարած մեռելություն չէր սփռում» և երբեք «երեք հարյուր հազարներու խողխողում», «մոլեռանդ խուժանի մը ձեռքով խաղաղ ապրող տարրին վրա հարձակում և ջարդ», «երեսուն հազար անմեղ կյանքերու անողորմ կոտորած» չէր կազմակերպում[28]։

Քննարկվող պրոբլեմին համարյա նույն մոտեցումն ուներ անվանի պատմաբան Լեոն։ Նախասովետական շրջանի իր աշխատություններում («Ստեփանոս Նազարյանց», «Գրիգոր Արծրունի», «Հայկական տպագրություն», «Հովսեփ կաթողիկոս Արղության» և այլն) Լեոն շատ բարձր էր գնահատում հայերի ռուսական կողմնորոշումը և Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին։ «Ռուսաց զենքը ոչ միայն բերում էր խաղաղություն և հանգստություն,— գրում էր նա,— այլև կապող մի կամուրջ էր այնքան դժբախտություններ տեսած մեր երկրի և եվրոպական քաղաքակրթության միջև։ Ռուսաստանի հովանավորության տակ մտած ժողովուրդներն այլևս ոչ մի հոգս չէին կարող ունենալ, բացի մտավոր ու կուլտուրական առաջադիմությունից»[29]։ Հայ լիբերալներին ուրախացնում էր, թե ինչպես ազգայնորեն համակենտրոնացվող արևելահայությունը զարգացնում էր իր կուլտուր-ազգային կյանքը, հասունանում բուրժուական զարգացման համապատասխան ազգային-կուլտուրական կյանքի ու գիտակցության համար։ Ռուսաստանը, գրում էր Լեոն, վերջ դրեց Անդրկովկասում իշխող պարսկա-թուրքական անիշխանությանը, տեղական ժողովուրդներին ընձեռեց անձի. գույքի, տնտեսական ու կուլտուրական զարգացման հնարավորություն, նորանվաճ երկրամասի հայկական շրջանները Ռուսաստանի հետ միացան կանոնավոր և անխափան ճանապարհներով։ Ռուսական տիրապետությունը նախադրյալներ ստեղծեց արևելահայերի ազգային համախմբման համար։

---

27 Մ. Օրմանյան, Ազգապատում, հատ. Դ, Երուսաղեմ, 1927, էջ 3581։

28 Նույն տեղում, էջ 5426։

29 Լեո, Ստեփանոս Նազարյանց, հատ. II, Թիֆլիս, 1902, էջ 3։

Լեոն շատ մեծ կարևորություն էր տալիս պարսկահայերի և արևմտահայերի գաղթին դեպի Անդրկովկաս։ «Երկու պատերազմներին հաջորդած երկու գաղթականությունները,— գրում էր նա,— փոխում էին հայերի ազգաբնակչական հանգամանքները։ Նրանք ամուր շեշտված ազգագրական միապաղաղության և զանգվածային հոծության կերպարանք էին տալիս Հայաստանի այն մասին, որ զետեղված էր Անդրկովկասում և անվանվում էր Պարսկահայաստան։ Այժմ այդ անունն իսկապես պատմական ավանդություն էր դառնում և տեղի էր տալիս ռուսական Հայաստան անվան, որ դառնում էր Ռուսաստանում ապրող ամբողջ հայության, ամբողջ ռուսահայ հատվածի բարոյական և քաղաքական հենարանը»[30]։

Ռուսաստան փոխադրված գաղթական հայերի տնտեսական դժվարությունների ու զրկանքների մասին պատմող բազմաթիվ փաստաթղթեր կային Լեոյի տրամադրության տակ։ Սակայն դրանք չկարողացան ճնշել պատմաբանին, երբ վերջինս արժեքավորում էր զանգվածային տունդարձի ամբողջական երևույթը։ Դրա շնորհիվ էր, ասում էր Լեոն, որ ավերված ու դատարկված երկիրը սկսեց արագորեն շենանալ, սկսեց մեր ժողովրդի դանդաղ, բայց հաստատուն զարգացումը։ Լեոն այն ճիշտ տեսակետն ուներ, որ ռուսական տիրապետությունը բարերար ազդեցություն է ունեցել հայ ժողովրդի տնտեսական զարգացման վրա։

Միշտ չէ, սակայն, որ նշանավոր պատմաբանը հավատարիմ մնաց տակավին 1889-ական թթ. իր իսկ կողմից առաջ քաշված այն մտքին, թե պատմաբանը պետք է ճանաչի «ժողովրդի ոգին, նրա կյանքի հոսքը և կեցության ներպը»[31]։ Հետագայում, իր մի շարք ստեղծագործություններում, նա չկարողացավ օբյեկտիվորեն արտացոլել հայ ազատագրական պայքարի որոշ կողմերն ու առանձնահատկությունները։ Մ. Պոկրովսկու դպրոցի որոշակի ազդեցության ներքո (հատկապես հայ-ռուսական հարաբերությունների քաղաքական հետևանքների հարցում) Լեոն մերձեցավ սուբյեկտիվ-իդեալիստական պատմահայեցությանը։ 1919—1920 թթ. գրած «Հայոց պատմության» 3-րդ հատորում, հայ ժողովրդի պատմության նորագույն շրջանի մասին Երևանի համալսարանում կարդացած դասախոսություններում, «Անցյալից», «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը», «Խոջայական կապիտալ» և այլ աշխատություններում Լեոն սուբյեկտիվիստական վերաբերմունք էր հանդես բերում դեպի հայերի ռուսական կողմնորոշումը, հայ ազատագրական շարժումն ու նրա գործիչները։ Գտնելով, որ ցարական ռեժիմի պայմաններում «անկարելի էր պատշաճավոր խորությամբ ու խստությամբ քննադատորեն վերաբերվել դեպքերին ու գործիչներին» և որ միայն սովետական կարգերի ժամանակ է հնարավոր «անաչառ գիտական-քննադատական վերլուծումների» ենթարկել պատմությունը և այդ ճանապարհով հասնել «իսկապես արդարև և ճշմարիտ խոսքի»[32], Լեոն քննադատության տակ առավ ամենից առաջ Կ. Եզյանին, որը, ըստ նրա, «խնամքով» թաքցրել ու ոսկեզօծել է «ցարական և հայ կղերական քաղաքականության մեղքերը»[33]։

---

30 ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ. Լեոյի անձնական ֆոնդ. ֆ. 1, ց. 1, էջ 171։

31 Տե՛ս «Փորձ», 1883, № 19, էջ 118։

32 Լ է ո, Հայոց պատմություն, Նորագույն շրջան, գրք I, Երևան, 1926, էջ 130։

33 Նույն տեղում.

ճիշտ բնութագրելով Կ. Եզյանին, Լեոն սխալվում էր, սակայն, երբ չէր տարբերում հորտատերերի և վաճառականության շահերի պաշտպան ցարիզմը՝ նույն ցարիզմի կողմից ստրկացված ռուս ժողովրդից։ Ռուսական ցարիզմին ու նրա բյուրոկրատիային մեղադրելով հայերի քաղաքական ակնկալությունների կործանման մեջ, Լեոն ռուս ցարերի արտաքին քաղաքական խարդավանքներին աշխատում էր մեղսակից դարձնել նաև հայ ազատագրական շարժման գործիչներին, որոնց թվում նաև Հովսեփ Արղությանին ու Ներսես Աշտարակեցուն։ Լեոյի կյանքի վերջին շրջանի այս գնահատումների հությունը կարելի է բանաձևել այսպես՝ ցարիզմը չկատարեց հայերին տված իր բազում խոստումները։ Մերկացումների առարկան և հարվածների ենթական Լեոյի մոտ ամենից առաջ և բոլորից շատ ցարիզմն էր՝ վերջինիս երկդիմի քաղաքականությունը, սակայն Լեոն ավելի շատ մեղադրում, քան բացատրում ու բացահայտում էր քննարկվող երևույթների հիմքերն ու պատճառները։

Չնայած այդ բոլորին, Լեոն հարկադրված էր խոստովանելու, որ ռուսական նվաճողականությունը, այնուամենայնիվ «նման չէր նախընթացներին գեթ նրանով, որ անապատի ամայություն չէր բերում երկրներին և կոտորած ու ավերում՝ նրա բնակիչներին»։ Այս նշանակում է, որ Լեոն շարունակում էր մնալ այն համոզմանը, որ նվաճելով Անդրկովկասը, Ռուսաստանը նրան ենթարկում էր ցարական ծանր ռեժիմին, բայց նվաճած երկրները ակամա ներգրավվում էին Ռուսաստանում ծավալվող հզոր շարժումների մեջ՝ նվաճված ժողովուրդներին հնարավորություն տալով հաղորդակից դառնալու եվրոպական մշակույթին[34]։

Քննարկվող պրոբլեմի առնչությամբ ուշագրավ մտքեր ունի նաև Վրթանես Փափազյանը, որն իր ստեղծագործություններում արտահայտում էր քաղաքի ու գյուղի մանրբուրժուական շերտերի դեմոկրատական տրամադրությունները։

Որքան ցասկոտ ու կրքոտ էր պարսկա-թուրքական բռնատիրական կարգերի նկատմամբ Վ. Փափազյանի բննադատությունը, նույնքան դրվատական ու բարյացակամ էին նրա խոսքերը՝ կովկասահայերի տնտեսական ու կուլտուրական զարգացումն ապահովող ռուսական տիրապետության հասցեին։ «Կովկասի մեծ մասը հայաբնակ նահանգների հետ ռուսաց ձեռքն անցնելուց հետո,— ասում էր նա,— վերջնականորեն, հայերը տնտեսապես սկսեցին կազդուրվել, տեղավորվել, երկրագործության ու վաճառականության նվիրել իրենց և դարմանել բոլոր կրած անցյալ դառն նեղությունները։ Նյութական ապահովությունը շուտով ստեղծեց նաև կուլտուրական (կենսակրթական) կյանք։ Իրենց նպաստավոր դրության շնորհիվ, ռուսահայերը շատ քիչ ժամանակում մեծ առաջադիմություն սկսեցին անել, քան թուրքահայ, դեռևս մահմեդական լծի տակ սմքած՝ եղբայրները»[35]։ Հեղինակն իր երախտապարտությունն էր հայտնում Ռուսաստանին մասնավորապես այն բանի համար, որ նրա հովանու ներքո Արևելյան Հայաստանը դարձել էր հայ զանգվածների համախմբման կենտրոնատեղին։ Փափազյանը այս տեսակետից պարսկահայերի ներգաղթից պակաս կարևորություն չէր տալիս և արևմտահայերի գաղթականությանը, որի շնորհիվ «Ռուսական Հայաստանը շենա-

34 Նույն տեղում, էջ 162։

35 Վ. Փ ա փ ա զ յ ա ն, Պատմություն հայոց գրականության, Թիֆլիս, 1910, էջ 321։

նում էր, բայմահայ դառնում և իր ուրույն կյանքը ունենում»[36]։ Արևելահայերի «ուրույն կյանքի» ամենահատկանշական կողմն այն էր, որ ժողովուրդը հնարավորություն ստացավ աղատ շունչ քաշել, օգտվել երկրի ապահովությունից ու տնտեսապես առաջադիմել։ Բարեհաջող պայմանները լայնորեն բաց արին երկրի դռները «արդյունագործական ձեռնարկների, առևտրական երթևեկության, այլև Եվրոպայից և Ռուսաստանից եկող ճանապարհորդների առաջ»[37]։

Բարձր գնահատելով արևելահայ կյանքում ռուսական տիրապետության դրական հետևանքները, Վ. Փափազյանը սխալվում էր, սակայն, երբ տուրք էր տալիս ռուս ցարերի «քաջալերիչ ձեռնարկներին» և իդեալականացնում ցարական օրենքները։ Նա հստակ պատկերացում չուներ հասարակության զարգացման հիմնական զսպանակների՝ արտադրողական ուժերի, արտադրական հարաբերությունների, դասակարգային պայքարի ու նման երևույթների մասին։ Այդ է պատճառը, որ հայ ժողովրդի պատմության նրա ըմբռնումը իդեալիստական էր։ Եվ դա էլ նկատի ուներ Ստ. Շահումյանը, երբ «Վ. Փափազյանը պատմագետի դերում» իր աշխատության մեջ սուր քննադատության էր ենթարկում «Բաքվի հայոց կուլտուրական միության» հրատարակությամբ լույս տեսած «Դրվագներ հայոց պատմությունից» ինը բրոշյուրները, որոնց կազմողներից մեկն էլ Փափազյանն էր։ Ստ. Շահումյանը ցույց տվեց, որ «այլազգիներին» ճնշելու ազգային-գաղութային իր քաղաքականությամբ ցարիզմը հանդիսանում էր Անդրկովկասի և Ռուսաստանի բոլոր ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդի, ազգային ու սոցիալական ազատության թշնամին։ Ուստի հայ ժողովուրդը որպես ազգություն պետք է ինքնորոշվի՝ միայն ու միայն մասնակցելով ռուս ժողովրդի աղատագրական այն մեծ պայքարին, որը վերջ պետք է տա ոչ միայն ցարական բռնակալությանը, այլև երկրում իշխող կալվածատիրական ու կապիտալիստական ստրկությանը։

Անցյալի խորիմացությամբ, ներկայի հաշվառմամբ և գալիքի հեռատեսությամբ Ստ. Շահումյանը գծում էր Անդրկովկասի և Ռուսաստանի միասնության անհրաժեշտությունը, անցյալի և իրօրյա անջատվողականներին պատասխանելով. «Այս կամ այն չափով բաժանվելով Ռուսաստանից, Անդրկովկասը կդանդաղի իր տնտեսական և կուլտուրական զարգացման մեջ, իսկ դա շատ վնասակար է...»[38]։

Ամփոփելով մեր շարադրանքը, կարող ենք ասել, որ նախասովետական հայ հասարակական մտքի և պատմագրության ներկայացուցիչները (բացի հայ ականավոր մարքսիստներից), մնալով իդեալիստական աշխարհայեցողության շրջանակներում, չկարողացան լուսաբանել Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման ամբողջ էությունն ու նշանակությունը։ Սակայն չնայած դրան նրանք նշեցին պատմական այդ ակտի պրոգրեսիվությունը և կարևորությունը արևելահայության համար։

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու պրոբլեմի գիտական և բազմակողմանի ուսումնասիրությունը սկսվեց սովետական պատմաբան-

36 Նույն տեղում, էջ 317։

37 Նույն տեղում, էջ 335։

38 Ստ. Շահումյան, Երկեր, հատ. I, Երևան, 1958, էջ 227։

ների կողմից։ Այս ուղղությամբ վգալը աշխատանք են կատարել ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Աշ. Հովհաննիսյանը, Մ. Ներսիսյանը, Ա. Հովհաննիսյանը, Ծ. Աղայանը և ուրիշներ։ Սովետահայ պատմաբանները գրտականորեն հիմնավորեցին այն թեզը, որ Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին ունեցավ պատմական խոշոր, պրոգրեսիվ նշանակություն հայ ժողովրդի համար։

ПРИСОЕДИНЕНИЕ ВОСТОЧНОЙ АРМЕНИИ К РОССИИ И ДОСОВЕТСКАЯ АРМЯНСКАЯ ИСТОРИОГРАФИЯ

Н. Б. САРУХАНЯН

(Резюме)

Освобождение Восточной Армении от персидского ига и присоединение ее к России имело большое прогрессивное значение. В результате этого исторического акта была устранена угроза ассимиляции восточных армян. Создались сравнительно благоприятные условия для социально-экономического и культурного развития страны, судьба армянского народа была связана с великим русским народом и т. д.

В армянской историографии досоветского периода обсуждались проблемы социального и культурного развития страны в связи с ее присоединением к России. Большинство авторов не могли глубоко осветить эту проблему, несмотря на то, что некоторые из них сделали правильные выводы и обобщения. Ряд представителей армянской досоветской историографии и общественной мысли более ясно и определенно подчеркивали то обстоятельство, что присоединение Восточной Армении к России имело большое прогрессивное значение для армянского народа.